Միշէլ Ալէ էկայեան պարագրած է աւելի քան 48 գործեր, որոնց շարքին է հայկական ներշնչումով «Քարաստան»ը, զոր ան ներկայացուցած է Աւինիոնի փառատունին: Այս ստեղծագործութիւնը կ'ընդգրկէ տիեզերական խորհրդանշաններ, որոնք կը ձգտին բան մը բաժնել միւսին հետ: Միւսը այնքան բացակայ



րատը, ինչպէս նաեւ՝ Փարաջանովի «Հրեղէն Ձիեր» ժապաւնին եւ Արշիլ Կորբի «Արուեստագէտը եւ իր մայրը» գեղանկարին նկարներով պարային պատկերները:

Նիւ Երթի մէջ 1973ին արդի պարի հսկաներէն Մերս Քանինկհամի աշակերտելէ ետք, էկայեան 1976ին Լիոնի մէջ կազմած է իր սեփական պարախումբը, որ այսօր կը գործակցի Ֆրանսայի հաղորդակցութեան եւ կրթութեան նախարարութիւններուն հետ:

Էկայեանի իւրաքանչիւր պարադրու՛մը փիլիսոփայական խորքով եւ ֆիզիքական շարժումներու լեզուով կը վերլուծէ մարդկային պատմութեան եւ հոգեբանութեան հասարակաց երեւոյթները: Դարաւոր խորհրդանշանները, սզգային եւ ժողովրդային մշակոյթի արտայայտութիւններն ու արժէքները, ինչպէս նաեւ տարբեր արուեստներու մէկտեղումը կորիզը կը կազմեն արդի պարային մէջը դրուած անոր ստեղծագործական բերքին:

Յրանսահայ պարադրող Միշէլ Ալէ էկայեանի պարախումբը այս տարի եւս Լիբանան կ'այցելէ՝ Ֆրանսայի երկիրներու Յրդ գերաստիճանին առիթով ներկայացնելու համար կիլկամէշի դիցալէպին վրայ հիմնուած «Ան աթանտան լ'օթր» (սպասելով միւսը) պարային ստեղծագործութիւնը: Էկայեան Ֆրանսայի մէջ ծանօթ է իբրեւ պարային արդի արուեստին մէջ իւրայատուկ ուղի մը բացած տաղանդաւոր արուեստագէտ մը, որ գեղարուեստական եւ միաժամանակ դաստիարակչական ծրագրերնեցող վրայ հիմնուած պարային իր դպրոցը կը ղեկավարէ Լիոնի մէջ: Լիբանանցիք ծանօթ են էկայեանի «Մետիթերանէ» (Միջերկրականներ) պարային շարքին, զոր ան Լիբանանի մէջ սկսած է ներկայացնել 1997ին: Այս շարքը կ'ընդգրկէ «Մէր միրուար» (ծով հայելի), «Լ'օ տը լայ» (ծովէն անդին), «Լը սեքրէ տը լա քլէ» (բանալիին գաղտնիքը) եւ «Շամէ տը սապլ» (աւազէ ճամբաներ) ստեղծագործութիւնները (այս վերջինին կատարումը, որ տեղի պիտի ունենար անցեալ Հոկտեմբերին, ջնջուեցաւ Սեպտեմբեր 11ի դէպքերուն յաջորդած քաղաքական լարուածութեան պատճառով):

«Ան աթանտան լ'օթր» պարային ստեղծագործութիւնը 12 Հոկտեմբերին պիտի ներկայացուի Լիսէյի Ապտէլ Քատէր սրահին մէջ (Պէյրութ) եւ 15 Հոկտեմբերին՝ Լիսէյի Հարիւրի սրահին մէջ (Սալոնա): 10 Հոկտեմբերէն 27 Հոկտեմբերի միջեւ Պէյրութի եւ Սալոնայի մէջ պարախումբը պիտի կազմակերպէ դպրոցական աշակերտներու յատուկ պարային դասընթացները եւ ելոյթներ՝ պար վերածելով մանկավարժական եւ դաստիարակչական միջոցի: Էկայեանի պարախումբին ելոյթները տեղի կ'ունենան հովանաւորութեամբ Լիբանանի մշակոյթի նախարարութեան, Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպանատան մշակութային բաժանմունքին եւ «Հարիրի» հիմնադրամին:

Մէկ ժամ տեւողութեամբ «Ան աթանտան լ'օթր» ստեղծագործութիւնը կը բաղկանայ 3 տեսարաններէ եւ յղացուած է 6 պարողներու համար: Անիկա մաս կը կազմէ «Մետիթերանէ» պարային շարքին: Էկայեան գայն իրա-

ԽՆԴՐԱՅԱՐՈՅՑ ՔԱՆԴԱԿ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

ԱՌՆՕ ՊԱՊԱԶԱՆԵԱՆԻ ԱՐՁԱՆԸ ԿԱՆԳԵՑՆԵԼՈՒ ԸՆԴՈՒՄԸ ԱՅՍ ԱՐՈՒԵՍԱԳԵՏՆԵՐԸ ԿԸ ԲԱԾԵ ԵՐԿՈՒ ՄԱՍԻ: ԸԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՐԸ ԵՒ ԸԱՄԱՑԱՆՅԻ ԿՐԱՅ ԸԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՐԵՐՈՒ ARMENIANOW.COM ԿԱՅԸ ԿԸ ՄԱՆՐԱՍԱՍՆԵՆ



«Երբ կը ստեղծես բան մը, որուն մասին մարդիկ շատ կը խօսին եւ նոյնիսկ կը քննադատեն, կը նշանակէ, թէ գնահատելի բան մը կը պարունակէ անիկա».

Երաժիշտ Առնօ Պապաջանեանի արձանը, որ ծրագրուած է կանգնեցնել Տէրեան եւ Թուճումեան փողոցներուն խաչմերուկին վրայ, չի գոհացնէ բոլորին գեղարուեստական ճաշակը: Արձանին ապագային վերաբերող անվերջ վէճերը քանդակագործին մղած են առկախելու իր աշխատանքը: Կարգ մը մտաւորականներ չեն սիրած Դաւիթ Բեջանեանի քանդակը եւ առաջարկած են կազմել յատուկ յանձնախումբ մը՝ քննարկելու համար գեղարուեստական վիճելի ճարքերը: Այլոց կարծիքով, նման առաջարկ մը անընդունելի է, որովհետեւ ի գործ կը ընէ համայնավարական միջոցներ եւ կը կաշկանդէ արուեստագէտին ստեղծագործական ազատութիւնը, կ'ըսէ հայկական պատկերասփիւռի Սեպտեմբեր 30ի հաղորդումը:

Յայտնապէս Երեւանի մէջ ոմանք սիրած են Բեջանեանի դործը: Քննարկութեան մասնակցող մը խոստովանած է, թէ հոգեկան խոր ցնցում ապրած է եւ միայն սթափելէ ետք անդրադարձած է, թէ որքան եզակի արժէք կը ներկայացնէ Բեջանեանի քանդակը: Մինչ քննարկումները կը շարունակուին, Երեւանի քաղաքապետութիւնը տակաւին չէ յստակացուցած իր կեցուածքը: Արդեօք պէտք է վա՛ր առնել քանդակը, թէ փորձել գայն ներկայացնել իրրեւ քաղաքին կեդրոնական շրջանին արձաններէն մէկը: Ամէն պարագայի, միայն ժամանակը ցոյց պիտի տայ, թէ քանդակը որքանով ընդունելի է հասկանալի պիտի ըլլայ Երեւանի բնակիչներուն համար, միանաւոր՝ որովհետեւ անիկա իրապէս արդիւնք է ստեղծագործական իւրայատուկ մտքի, կ'եզրակացնէ հաղորդումը:

Երեւանի քաղաքապետին համաձայն, Առնօ Պապաջանեանին նուիրուած միայն մէկ արձան բաւարար չէ Երեւանի բնակիչներուն համար, որոնք կ'ապրին անոր երաժշտութեամբ: Կարելի է նոյնիսկ 4 արձան կանգնեցընել: Անոր կարծիքով, թէ՛ քանդակ իր վերջնական ձեւին մէջ տեսնելէ ետք ժողովուրդը

տակաւին չսիրէ գայն, ապա կարելի է ապսպրել նոր արձան մը, որքանք մը կազմակերպելէ ետք, եւ վերջին խօսքը ձգել Երեւանի բնակիչներուն: Թէ՛ ժողովուրդը սիրէ երկրորդ արձանը, Բեջանեանի գործը պիտի վերցուի:

«Արմինիանաուի» թղթակից Գայանէ Արազամեան «գեղարուեստական յարձակում» կ'որակէ իրադարձութիւնը՝ գայն ներկայացրնելով իբրեւ աւանդութեան եւ արտայայտչական ազատութեան միջեւ բախումի երեւոյթ, որուն համար կայացած են մամոյտ ասուլիսներ եւ պետական մակարդակի քննարկումներ: Քանդակը հակադիր կիրքեր հրահրած է մտաւորականներու եւ պարզ անցողիներու մէջ, իսկ ինքնին քանդակագործը «փիլիսոփայութեամբ» կը դիմաւորէ բուռն վէճերը:

«Երբ կը ստեղծես բան մը, որուն մասին մարդիկ շատ կը խօսին եւ նոյնիսկ կը քննադատեն, կը նշանակէ, թէ գնահատելի բան մը կը պարունակէ անիկա», կ'ըսէ Բեջանեան:

Առնօ Պապաջանեան մահացած է 1983ին: Ան հուշակաւոր է դաշնակի իր գործերով: Անոր յօրինած երգերէն շատերը հնչած են նախկին Խորհրդային Միութեան տարածքին նկարահանուած ժապաւնիներու մէջ:

Պապաջանեանի սերտ բարեկամներէն Ալեքսանտր Յարութիւնեան ըսած է, թէ քանդակը պէտք է նետել Զանգուի ձորը:

Մակայն դրագէտ եւ հրապարակախօս Ադապի Այվազեանի համաձայն, երաժիշտին արձանը, որ շինուած է նոր ոճով եւ ոչ աւանդական լուծումներու օգտագործումով, ապագային պիտի դառնայ քաղաքին լաւագոյն քանդակը:

«Երեւանի բնակիչներն ու այցելուները, որոնք վարժուած են տեսնել պատմական դէմքերու իրապաշտ, լուրջ եւ տիրական քարէ ու մետաղէ վերարտադրութիւնները, կը ցնցուին, երբ կը տեսնեն երաժիշտին ծաղրական կերպարի տպաւորութիւն առթող արձանը»:

Օփերայի հրապարակին մուտքը եզերող Յովհաննէս Թումանեանի եւ Ալեքսանտր Սպենդեարեանի պատկառելի արձաններուն գրադնութեան մէջ», կը գրէ Արազամեան, Հոկտեմբերին 4ին հրապարակուած իր յօդուածին մէջ:

Բեջանեան այնքան հեռացած է հայկական քանդակներու աւանդական ոճէն, որ իր հովանաւորին հետ որբաձած է աւանդապահներու ծագրանքին առարկան: Երաժշտանոցի 10 ուսանողներ, որոնք համար Պապաջանեանը կուռք

է, այնքան զայրացած են, որ պատրաստ են պայթեցնել արձանը կամ ներկ թափել անոր վրայ:

«Ամէնէն նուրբ ելեւէջներով կերտուած «Յայգերգ»ին հեղինակը արժանի չէ նման ալլանդակ եւ ահարկու արձանի», ըսած է ուսանող մը՝ Մանիէլ Յարութիւնեան:

Երեւանի քաղաքապետ Ռուպէրթ Նազարեան բնական կը նկատէ նման հակազդեցութիւն մը, որովհետեւ մարդիկ կ'ակնկալեն տեսնել քաղաքին միւս արձաններուն ոճով քանդակուած գործեր:

«Այս արձանը արժանի չէ քննադատութեան, - կ'ըսէ Նազարեան: - Փոխանակ մարդիկ իրենց ուժն ու եռանդը ի գործ դնեն բան մը ստեղծելու, անոնք կը զբաղին քննադատութեամբ»:

Պապաջանեան քանդակին մէջ պատկերուած է դաշնակի առջեւ նստած դիրքով (դաշնակը

քանդակուած է ութրանական մարմարի վրայ): Անոր արտաքին տեսքը չափազանցուած է, եւ կը թուի, թէ երաժիշտը կը թռի իր թեւերով ու ձեռքերով, ինչպէս կը նկարագրէ Արազամեան: Պրոնցէ արձանին ծախսերը հասած են շուրջ 50 հազար տոլարի, որ տրամադրուած է հովանաւոր Ռուբէն Հայրապետեանի կողմէ: Ան կը հաստէ, թէ քանդակագործն ու ճարտարապետը աշխատած են անվճար:

Պապաջանեանի նուիրուած արձան մը գետեղելու դադարաւոր առաջին անգամ յղացած է «Առնօ Պապաջանեան» հիմնադրամը: Ծրագրին ծախսերը հոգալու նպատակով համբարներ կայացած են Լոս Անճելըսի եւ Երեւանի մէջ: Մինչ հիմնադրամին պատասխանատուները կը փորձէին թաւարար գումար ապահովել, անոնք լսած են Բեջանեանի գործին մասին: Հիմնադրամին պատասխանատու Յակոբեանի համաձայն, նախատեսուած էր մրցանք կազմակերպել լաւագոյն արձանը կանգնեցնելու համար, սակայն յանկարծ «յայտնի դարձաւ, թէ արձան մը կը

շինուելը առանց մրցանքի»:

«Ասիկա բնաւ Առնօյի արձանը չէ, կրնայ շատ հետաքրքրական արձան մը ըլլայ «Արուեստագէտի սխրանքը» կամ որեւէ այլ անունով, բայց ոչ՝ Առնօ Պապաջանեանի արձանը», կ'ըսէ հիմնադրամին պատասխանատուն:

Նոյնիսկ Հայաստանի նախագահը համակարծիք է: «Քանդակը իբրեւ արուեստի գործ եւ արուեստագէտի կերպար շատ հետաքրքրական եւ արտայայտիչ լուծումներ ունի, բայց ժողովուրդին հոգեբանութիւնը տակաւին պատրաստ չէ նման գործ մը ընկալելու, ան չի կրնար այս տեսակի քանդակի մը մէջ տեսնել իր պատմելի կերպարը», ըսած է ան:

Թէ եւ նախագահը տրամադիր է գեղարուեստական քննադատութիւն ընելու, սակայն կը մերժէ կոհացում տայ «Առնօ Պապաջանեան» հիմնադրամի պահանջին եւ վար առնել արձանը, որուն պաշտօնական բացումը տակաւին տեղի չէ ունեցած: Ռուպէրթ Քոչարեան ըսած է, թէ երկրի մը նախագահին վստիչ չէ միջամտել գեղարուեստի վերաբերող վէճի մը:

Քանդակագործը եւ ճարտարապետ Լեւոն Իդիթեան այնքան յուզուած են վիրարուած են, որ չեն կրցած

շարունակել իրենց աշխատանքը:

Բեջանեան թէ եւ քննադատութիւնը կը գերազանց անտարբերութեան է, սակայն խոցուած կը զգայ: «Զիս ամէնէն աւելի կը զայրացնէ այն իրողութիւնը, թէ որքան պարզուեցաւ մեր ժողովուրդին մտածողութիւնը, կ'ըսէ ան: - Արձանի մը մէջ կ'ուզեն տեսնել միայն դէմք եւ նմանութեան, բայց չեն ուզեր հասկնալ անոր փիլիսոփայական միտքը՝ Առնօյի բուռն եւ զարմանալի կերպարը»:

Քանդակագործներ Նորայր Կարկանեան, Յերտիանտ Առուստամեան, Գարիկ Ղազարեան եւ բազմաթիւ գեղանկարիչներ պաշտպանած են Բեջանեանը՝ անոր քանդակը կողջելով արուեստի հրաշալի գործ եւ նոր երեւոյթ՝ հայ արուեստի պատմութեան մէջ:

«Դաւիթ չզիջեցաւ եւ հարազատ մնաց իր սկզբունքներուն, - կ'ըսէ Կարկանեան: - Ան ընտրեց նոր եւ դժուար ուղին եւ փշրեց աւանդութեան հաստ սառույցը: Ի՛նք կրեց հարուածը. այսուհետեւ շատեր բաւական համարձակութիւն պիտի ունենան նման գործեր ստեղծելու»:

«Թէ՛ Բեջանեան ի՛նք կրած է «հարուածը», ինչպէս կ'ըսէ անոր արուեստակիցը, ապա թեւեւ գայն կը մեղմացնէ այն իրականութիւնը, որ վէճին հրապարակումէն ետք ան վաճառած է նախապէս աշխատած իր գործերէն 5ը», կ'եզրակացնէ «Արմինիանաու»ի թղթակիցը:

Պատրաստել
L. ԿԻԼԿԱՄԵՇԻ-ՍՐԱՊԵԱՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՍԵՊՏԻՄԵՐ ԸԱԶՊԱՋԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 2002, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԱԶԳԵՆ ԷԹԵՄԵՋԵԱՆԻ մահուան Զ. տարեկիցին եւ **ԵՐՈՒԱՆԴ ԷԹԵՄԵՋԵԱՆԻ** մահուան Ե. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱԼԻՍ ԳԱՐԱՃԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԵՐԱՆՈՒՀԻ ԸԱԹՅԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՂԱՍՍՍԿՈՍ ԱՐՇԱԿՍԻ ԱՊՈՅԵԱՆԻ (ծնեալ ՄԻՆԱՍԵԱՆ) մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 2002, Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱԼԷՊ ԱՐՇԱԿՍ ԱՐԱՊԵԱՆԻ մահուան քառասունքին եւ **ԹՈՎՐԱՍ ԱՐԱՊԵԱՆԻ** մահուան Թ. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 2002, Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, շալիպ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐՄԵՆԱԿ ԳՐԱՃԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԱԹԻԼՏ ԶԵՐԶԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 2002, Զալբայի Շալ Կաթողիկէ Ս. Մայր եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5271 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՇՈՐԻՉՈՒԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵԱՏ
1. Հայոց կաթողիկոս՝ Ստեփանոս Ե.:	1. Ճերմակ - Ափիկից:
2. Վայրի ձարխոտ - Ցուցական ածական - Մէկը:	2. Իգական անուն - Արեւելեան իջեւան:
3. Շքերի Մաքլէյնի ֆիլմերէն:	3. Լիբանանահայ միութիւն մը - Արաբ նախագահ - Դրկից տառեր:
4. Տարիք - Աղբ - Անծար՝ կաթիլ:	4. Թեթեւ քուն - էրի եղբայրներէն:
5. Զերմուկներ գտնող իշապանը - Արական օտար անուն - Գինգ:	5. Իրաւահասար - Նաեւ:
6. Միջօրէ - Կարմրամիս ձուկ:	6. Սեղանաբեկ - Վաղեմի:
7. Համեմային բոյս:	7. Մեծ մայր - Չայնի խաղ:
8. Նախիր - Այրուբեներէն:	8. Ուրուական - Անատամ մարդու կակուղ ուտելիք:
9. Չարայուշուկիւն - Մշտադալար թուփ:	9. Փոռլիւն - Հիացում:
10. Աղուամազ (հակ.) - Սանդ:	10. Ստացական դերանուն - Այեր - Ֆրանսական գետ:
11. Բերկրալի - Սլաք:	11. Շրէշի բոյսը - Ճպոտ:

ԹԻԻ 5270

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ա	Ն	Գ	Ս	Ս	Ա	Կ	Յ	Ք
2	Խ	Ն	Գ	Ր	Ա	Ն	Բ	Ձ	Ի
3	Գ	ՈՒ	Մ	Ս	Ա	Կ	Ա	Ի	
4	Ծ	Ի	Խ	Յ	Յ	Ա	Ս		
5	Ա	Մ	Ի	Ս	Ի	Ն	Ա	Ա	
6	Ղ	Ճ	Մ	Շ	Ա	ՈՒ	Մ	Ն	
7	Ա	Գ	Ս	Ն	Կ	Ա	Ն	Կ	
8	Մ	Ո	Թ	Ք	Ա	Լ	Թ		
9	Ա	Ի	Ր	Է	Ն	Բ	Ա	Ր	
10	Թ	ՈՒ	Զ	Բ	Օ	Ղ	Ի		

ԵԹԵ...

●ՄԻՋՆԱԿԱՐԳԻ դասարաններու աշակերտ եւ, կրճատ հետեւի ճախապատրաստական (Ե. Ք.) դասընթացին:

●Հասած եւ ՊՐԸՎԵԻ դասարան, կրճատ հետեւի ընդհանրապէս Պաշտպանի դասարանին:

●Ունի ՊԱԵԼՈՐԵԱ, կրճատ հետեւի **ՓՕ-ԼԻԿԼՈԹԻ** համալսարանական դասընթացին:

●Մատչելի կրթաթղթակ, առաւօտեան եւ երեկոյեան դասընթաց, ֆրանսերէն եւ անգլերէն բաժնիներ:

ՓՕԼԻԿԼՈԹ ԲՈՒԼՃ: ՀԵՌ. 01 - 251320
ՏԵՐԵՏՆՈՐԵՆ Պ. ՇԵՄՍԵՍԵԱՆ

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հետեւեալ հեռախոսահամարներով:

258526, 260115 եւ 241274:

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամացիներու փակման սակագները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	31,40 - 33,50	լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00	լ.ն.
Քուէյթեան տինար	4953,41 - 4957,42	լ.ն.
Յորդանանեան տինար	2124,41 - 2128,42	լ.ն.
Պահրէյնեան տինար	3995,00 - 4000,00	լ.ն.
Ս.Մ. Էմիրութեան տինար	408,41 - 412,42	լ.ն.
Քարաքեան ուիալ	412,16 - 416,15	լ.ն.
Սէուական ուիալ	399,88 - 403,99	լ.ն.
Օմանեան ուիալ	3900,00 - 3930,00	լ.ն.
Եգիպտական կինէ	322,71 - 327,72	լ.ն.
Անգլիական սթըրլին	2361,65 - 2365,11	լ.ն.
Զուիցերիական ֆրանք	1017,25 - 1021,52	լ.ն.
Թրքական լիրա	3,61 - 3,64	լ.ն.
Կիպրական փաունտ	2590,10 - 2594,17	լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,19 - 12,23	լ.ն.
Ավստրալական հապար ֆրանք	2450 - 2451	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	942,50 - 946,65	լ.ն.
Աւստրալական տոլար	820,17 - 824,21	լ.ն.
Եւրո	1490,90 - 1494,16	լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	115,000 - 125,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	108,500 - 118,500	լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	95,500 - 105,500	լ.ն.
Մեքսիկական փետոս	569,500 - 589,500	լ.ն.

Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 15,000,000 - 15,500,000 Լ.Ն.

Մէկ օնս ոսկի 317,38 - 321,42 \$

Մէկ օնս արծաթ 4,31 - 4,35 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրո	0.9875
Քանադական տոլար	1.5903
Զուիցերիական ֆրանք	1.4805
Ճափոնական եէն	123.61
Մէկ սթըրլին	1.5631

Մէկ տոլար 581.57 դրամ

● ՍՈՒԼԵՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում

Ա. կարգ	4 1/8	4 1/8
Բ. կարգ	4 1/8	4 5/8

ՏԻՆՆԻ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

★**ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)

Սխալմամբ կը կարծէք, որ ձեր իրաւունքին մէջն էր: Այս հարցով դիմեցէք հարցին տեղեկ անձի մը, որպէսզի պատիժի կամ տուգանքի չենթարկուիք:

★**ՑՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)

Ամէն կողմէ ձեզմէ դրամ պիտի պահանջեն այսօր. խնուրպաններ, պարտապահանջներ կամ այլ մարզի անձեր պիտի դիմեն ձեզի, ու դուք պիտի ձանձրանաք դրամ վճարելէ:

★**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)

Օրը վտանգաւոր է ամէն տեսակետով, գոյգերու համար, որոնք աւելի վատը պիտի տեսնեն, քան յաւրը:

★**ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)

Աշխատանքի կազմակերպման մարզին մէջ օրը փայլուն պիտի չըլլայ: Աշխատելու ձեր տրամադրութիւնը բնաւ տեղը չէ: Թօքափեցէք ծուլութիւնը:

★**ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Ճիգ բափեցէք, եթէ կ'ուզէք հրապուրել ձեր հաւնած անձը: Թեւ յաւելեալ շարժում մը պիտի չընէք, բայց բախտը ձեր կողմը պիտի ըլլայ:

★**ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Եթէ որոշած էք ձեր կապերը վերջնականապէս խզել ձեր ընտանիքին կարգ մը անգամներու հետ, պիտի տրտմիք: Միւս կողմէ, մտադիր էք հաշտութեան դիմելու: Հարցերը պարզութեամբ առէք:

★**ԿՇԻՌԻՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Նախանձի պատեհողով եղբայրական կամ բարեկամական խնդիրներ ստեղծուած են, եւ ձեր կապերը վատարացած են անոնց հետ: Ձեր միտքը եւ սիրտը մեծցուցէք նախանձողներուն դիմաց:

★**ԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Մեծ ծախսեր մի՛ բանք, որպէսզի ամսուան ձեր շահածը մէկ հարուածով հոգիին չտաք: Այսօր ձեզմէ կը պահանջուի աւելի խնայասէր ըլլալ:

★**ԱՂԵՂՆԱՌՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Երկուսը յաջողութեան հետ, այսօր օրը տոգոյն կը բուլի ձեզի: Ձեր ոտքերը գետին դրէք, իրապաշտ ու յաւատես եղէք:

★**ՅԾԵՂՋԻԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Այսօր պիտի ունենաք կարգ մը ծանր պահեր, որոնք պիտի ստեղծուին արուեստական կերպով: Բայց դուք չէք որոշած ընել բան մը՝ առանց մտածելու եւ հակադրելու եղածին:

★**ՄՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)

Այսօր աւելի գիտակցութիւն կը սպասէք այն անձերէն, որոնց օգնած էիք սրտանց, կամաւոր կերպով: Ձեր միտքը ճիշդ է եւ արդար, բայց շատեր սկսած են ձեզ արհամարհել: Կարեւորութիւն մի՛ տաք:

★**ՉՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Այսօր պիտի անդրադառնաք, որ ձեզի եւ ձեր գործակիցներուն եղած խոստումները բնաւ պիտի չյարգուին: Համբերութեամբ սպասեցէք աւելի լաւ օրուան:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒԱՍՏՐ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԵՐԳԱՀԱՆԴԵՍ

ՕՓԵՐԱՅԻ ԱՐՄՏՐԱԼԻԱՅԻ ԵՐԳՉՈՒՀԻ ՓԵՆԻ ՓԱՒԼԱՔԻՍ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՉ

Երոպական երկիրներ իր շրջապատող տարածքին, աւստրալիացի օփերայի նշանաւոր երգչուհի Փենի Փաւլաքիս այսօր՝ 11 էւ վաղը՝ 12 Հոկտեմբերին Լիբանանի մշակութային հանրութեան պիտի ներկայանայ երկու ելոյթով: «Այ Մատինա» արահին մէջ իր ելոյթներով Փենի Փաւլաքիս պիտի մեկնարանէ նշանաւոր օփերաներէ հատուածներ պարունակող յայտագիր մը, որուն մաս կը կապուեն՝ «Մատամ Պաթրիֆլայ», «Թուրանտո», «Էօժէն Օնեկին» եւ այլ օփերաներէ բաժնիներ:

Փաւլաքիս թատերականութեամբ յատկանշուող սոփիստան մըն է, որուն մեկնաբանութիւնը եւ յայտագիրը կը յորդին պատշաճութեամբ, կիրքով եւ տրամաբար մով: Սիտինի Օփերայի տան մէջ իր անդրաշիկ ելոյթով դասական երաժշտութեան աշխարհին մէջ իր դիրքը հաստատած է աշխարհի պանագիր մը:



Փենի Փաւլաքիս

Նուագահանդէս. Լիբանանի Ազգային սիմֆոնիկ նուագախումբի ելոյթը, ղեկավարութեամբ խմբավար Ունեյէյ Բոքիլիէի, մասնակցութեամբ կիրառած ժառանգութիւն: Տեղի կ'ունենայ երեկոյեան ժամը 8:30ից, ՍԷՆ Փոզէֆ Եկեղեցւոյ մէջ:


Երգահանդէս «Օփերա Պէյրուս» աւեր Փենի Փաւլաքիս, երեկոյեան ժամը 8:30ից, «Այ Մատինա» թատերասրահին մէջ:

Ֆրանսիական երկիրներու վեհաժողովին առիթով Լիբանանի մէջ աշխատող կերպարներու ցուցանման գործերու ցուցադրութիւն, մինչեւ 15 Հոկտեմբեր, ԵՌՆԵՍՏՔՈՒՄ պալատին ցուցահանդէսներուն մէջ:

Ցուցադրութիւն, «Երաժշտութիւն», երեկոյեան ժամը 10:00ից, «Քաղցիտ Տիւ Լիպան»ի մէջ:

ՀԵՌԱՏԵՍԻՐԸ

10:00. Սապահո	20:00. Արաբերէն	15:20. Մուլտֆիլմեր «Քաղաքի մուկը եւ դաշտային մուկը»
12:30. Միլիթը	20:30. Ռուսում	«Չգուշացէք, կապիկներ են»
13:00. Մարտի հանա	20:32. Ման	16:00. Հեռուստատեսերիալ «Սիրոյ կախարհանք»
14:00. Եւրոնիւզ	սաւարպահ մալիոն	17:00. Երեկոյեան Երեւան
14:30. Լուրեր	21:30. Ամերիկեան ժապաւէն	17:20. Միտաղի տուն
15:00. Մշտուար		18:10. Սյուր
17:00. Պէս սելըր		18:20. Եկեղեցական կէսը
18:00. Երբի Հոյմ		18:35. Տուն-տունիկ...
18:30. Արաբական ֆիլմաւար		19:00. Հայրեր
19:30. Արաբ. լուրեր		19:50. Որակի նշան
20:00. Տեղական ֆիլմաւար		20:00. Երկար ժապաւէն՝ «Անիծուածները»
22:00. Տեղական ֆիլմաւար		20:25. «Ում է ծայտում կանգը»
23:00. Ամերիկեան ֆիլմաւար		21:40. Պոէզիայի ալիքաբերներ
ԵՒ. ՊԻ. ՍԻ. 7:00. Սի. Են. Էն. ի լուրեր 7:30. Սի. Են. Էն. Եւր. Հէր		22:00. Հայրեր
08:25. Մարտի օրը		22:20. Կէս գիշերային ձայնախմբ
09:00. Թայպիս էլ թորպ		23:20. Հայրեր (ռուսերէն)
10:30. Նահարքոյ Սայիտ		23:25. Հայրեր (անգլերէն)
14:00. Մերթիւ		23:30. Երեկոյեան Երեւան
15:00. Լուրեր		23:45. Սյուր
15:15. Քայլ մէջ նա		00:00. Լուր
18:00. Չուրպա		00:05. Տօր 10
19:00. Մարիս Իգապէլ		01:00. Լուր
20:00. Արաբերէն լուրեր		01:05. Տօր 10
20:30. Մարտի ու անա		01:55. Նորատետր
21:30. Եա լէյ եա աայն		02:00. Լուր
23:30. Թէլ օրօ		02:05. Տօր 10
00:00. Ամերիկեան ժապաւէն		03:00. Հայրեր
ԵՒ. ՊԻ. ՍԻ. 7:00. Լուրեր 8:30. Արաւայ սապահ		04:00. Հեռուստատեսերիալ «Էնդհաւուպի առեղծուած»
13:00. Ֆէլէ ինֆօ		04:25. Ես բաժնետեր եմ
13:05. Նորս լէնիսին		04:45. Երեկոյեան Երեւան
14:00. Ապրիլի օրը		05:00. Երկար ժապաւէն՝ «Անիծուածները»
14:20. Ֆրանսերէնով լուրեր		06:30. Մուլտֆիլմ՝ «Չգուշացէք, կապիկներ են»
14:40. Հայերէնով լուրեր		06:40. Պոէզիայի ալիքաբերներ
15:30. Արաբական ֆիլմաւար		06:50. Սյուր
16:30. Թէլեքայի		
17:00. Ըզդար		



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԿՍԻ 26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

Լիրանանի ֆուտբոլի ֆեդերասիոնը, հրապարակեց Ա. Դասակարգի 2002-2003 եղանակի ախոյեանության երթի մրցումներուն յայտագիրը, որոնք կը սկսին Շարաթ 26 Հոկտեմբերին:

Շարաթ	Ժամ	ԴԱՇՏ
Նրժմե - Մապարթ	3:30ին	Մ. Աւան
Օլիմպիկ - Սաժես	5:00ին	Պէյրուք
ԿԻՐԱԿԻ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ		
Ախա Ալեյ - Թատամն	Սուր	Պ. Համուտ
Շապապ Սահէլ - Ահու	2:30ին	Սաֆա
Սալամ - Պրթ	2:30ին	Թրիֆոլի
Սաֆա - Անուար	5:00ին	Մ. Աւան

ՎԱՂԸ ԵՒՐՕ - 2004Ի ՉՏՈՒՄԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Եւրո - 2004ի գտումի բ. հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի պիտի ունենան վաղը՝ Շարաթ, իրաքանչիւր իւրքերը (նշանակէ՛ք) տասը խմբակ (ներս ալ հետաքրքրական ձևատումներ կը պատուին ըլլալ, մանաւանդ կարգ մը խումբերու համար, որոնք պիտի պայքարին գրաւելու իրենց խմբակին պարագլուխի դիրքերը:

Նշենք, թէ իրաքանչիւր խմբակի պարագլուխի դիրքը գրաւող խումբը, ինչպէս նաեւ շրջ դիրքը գրաւողները (որոնք փէյ-յօֆի մրցումներ պիտի կատարեն իրարու դէմ), պիտի ապահովեն իրենց տնտեսը: Այդ տասնհինգ խումբերուն կը գալ միասնաբար հիւրընկալ երկիրը՝ Փորթուգալ, որ գտումի մրցում պիտի չկատարէ:

Նշենք, թէ Հայաստանի ֆուտբոլի ասոցիացիոն խումբը, որ մաս կը կազմէ 2. խմբակին, վաղը մրցումը պիտի չկատարէ: Չորքերքի, 16 Հոկտեմբերին, սակայն, անիկա հիւրը պիտի ըլլայ Յունաստանին:

Յարդ տեղի ունեցած մրցումներուն ընթացքին 14 խումբեր արձանագրած են մրցաշարի իրենց առաջին յաղթանակը: Սուրք են. Մոնթենեգրո, Ֆրանսա (Ա. խմբակ), Ռուսիա (Բ. խմբակ), Հոլանդիա (Գ. խմբակ), Աւստրիա (Գ. խմբակ), Լեհաստան (Դ. խմբակ), Գերմանիա (Ե. խմբակ), Սլովակիա (Ե. խմբակ), Թուրքիա (Ե. խմբակ), Պուկարիա (Ը. խմբակ), Իտալիա, Կայէս (Թ. խմբակ), Չորեքերիա եւ Ռուսիա (Թ. խմբակ):

14ԴԴ ԱՍԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ ԻՐԱՆ - ՃԱՓՈՆ՝ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԲԱՐՏԱԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Փուլանի մէջ (Հարաւային Քորէա) տեղի ունեցող ախական 14րդ խաղերուն 11րդ օրուան մրցումներուն, երէկ թէեւ շատ մը մարզիկներ սկի մետալներու տիրացան, սակայն ամէնէն ուշագրաւը եղաւ ֆուտբոլի մրցաշարքը, որուն ընթացքին Իրան եւ Ճափոն յաղթանակներ արձանագրելով՝ ապահովեցին աւարտական մրցումին իրենց տնտեսը:



Մախլետ Օթայաի Ստորե՛ մետալներուն դասաւորումը 11րդ օրուան մրցումներէն ետք:

ՈՍԿԻ	ԱՐՄԱԹ	ՊՐՈՆՁ
1. Չինաստան	127	66 55
2. Հարաւային Քորէա	67	64 71
3. Ճափոն	39	64 57
4. Ղազախստան	16	16 20
5. Թայլէն	9	11 7
6. Հնդկաստան	9	8 8
7. Թայուան	7	13 18
8. Հիւսիսային Քորէա	7	11 11
9. Ուզբէքստան	7	8 12
10. Սինկապուր	5	2 9
11. Մետու. Արաբիա	5	1 0
12. Իրան	4	7 12
13. Եթիոպիա	4	5 4
14. Հոնկ Ըոնկ	4	3 9
15. Սալեզիա	3	7 8
16. Ինտոնեզիա	2	6 7
17. Ֆիլիպին	2	3 6
18. Կիթան	2	3 4
19. Պահայէն	2	2 2
20. Սրի Լանքա	2	1 1
21. Թուրքմենիստան	1	2 1
22. Մոնկոլիա	1	1 10
23. Ըուելթ	1	0 1
24. Լիբանան	1	0 0
25. Միանմար	0	5 5
26. Կըրթիզիստան	0	4 4
27. Փաքիստան	0	2 5
28. Տաճիկիստան	0	2 1
28. Ա. Մ. Էմիրութիւններ	0	2 1
30. Պանկլատէ	0	1 0
31. Սուրիա	0	0 1
31. Եմէն	0	0 1
31. Լեփալ	0	0 1
31. Յորդանան	0	0 1

Սէնուական Արաբիա շահեցաւ իր հինգերորդ ոսկի մետալը, շնորհիւ՝ Մախլետ Օթայաիի, որ տղոց հինգ հապար մեթրի վազքի մրցումներուն, հանդիսացաւ առաջին: Ան ալ ոսկի մետալ մը ալ շահած էր տասը հապար մեթրի վազքի մրցումներուն:

Աղջկանց 100 մետր վազքի արգելաբար մրցումներուն ոսկի մետալին տիրացաւ չին Փենկ Եունկ, որ արձանագրեց 12" 96 արդիւնք մը:

Երէկուան մրցումներուն առաւելագոյն մետալները շահողները հանդիսացան Չինաստան եւ Հարաւային Քորէա, որոնք շահեցան 7ակն ոսկի մետալներ:

Նկատի ունենալով, որ Գերմանիա շարաքովերջին Եւրո - 2004ի գտումի մրցում չունի կատարելիք, երբ Հանովրի մէջ իրար ընդմիջեց Ֆարո Կոլմիները: Գերմանիոյ մարզիչ Ռուտի Վեյլըրը այսօրուան իր կազմին ներսուցակայ մարզիկներ: Մընայապէս Տիեթմար Համանն է յետապահ Քրիսթօֆ Մեթկելտըրը վիրաւոր են, մինչ միջնապահ Միքայէլ Պայար անհանգիստ է:

ՌԵԼԱՔ ԱՍՍ.

Կը ստանձնէ ոսկերիչներու յատուկ ՈՍԿԻ ԹԱՓՈՒ (GOLD CASTING) ԳՈՐԾԵՐ

արդիական ելեկտրոնիկ մեքենաներով

- Մաքրութիւն
- Բնասնդիւր աշխատանք
- Մասնագիտացած անձնակազմ

Մատչելի գին, ձրի սպասարկութիւն

Ընդածայն / ֆաքս: 01 - 889188

Եւ 03 - 375724

Ի՞նչ ԿԸՍԵՆ ԿԱՍ ԿԸՆԵՆ ՓՕԼԻԿԼՕԹ

ԶՈՒԵԻ ԵՐԶԱՆԱԲԱՐՏԵՐԸ

«... Փոլիկլօթ Բոյէճէն մասնակցեցաւ BT3 քննութեանը, Լիբանանի մէջ բարձրագոյն նիշը ապահովող առաջին հինգին մէջ էի: Այս յաջողեցաւ նաեւ TS վկայականի քննութեանը: Այժմ կ'աշխատիմ որպէս գլխաւոր հաշուապահ ոսկերչական մեծ ընկերութեան մը մէջ. Պուրձ Համուտ...»:

ԹԱԼԻՆ ՃԱՐԻՔԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱԾԻՂ

ՍԿԱՌՏԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏ

Հ. Մ. Ը. Մ. Անթիլիա մասնաճիւղի սկաւուտային խորհուրդն ու խմբագրական կազմը կը հրաւիրեն իրենց տարազանութեամբ մասնաճիւղի վերամուտի առաջին հաւաքին, Կիրակի, 13 Հոկտեմբեր 2002, առաւօտեան ժամը 9:00ին, «Աղբալեան Հ. Մ. Ը. Մ.» մարզամշակութային համալիրէն ներս: Նոր անդամներ կ'ընդունուին ամէն Կիրակի առաւօտեան 6:00 վայրին մէջ:

Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ՄԱՍՆԱԾԻՂԻ ՍԿԱՌՏ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ՆՍԲԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԱՉԱՍ ՌՃԻ ԸՄԲԵԱՄԱՐՏ. ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՈՍԿԻ ՍԵՏԱԼԸ ԹՈՒՐԲԵՆ ՎԵՐԱԴԱՐՉՈՒԵՑԱԲ ԶԱՅՈՒՆ

Վերջերս Իրանի մարզադաշտ Թեհրանի մէջ աւարտեցան աշխարհի ազատ ռճի ըմբշամարտի ախոյեանության մրցումները: Օրին հաղորդած էինք, որ 60 քիլոկրամ դասակարգին մէջ աւարտական հանգրուան հասած էին հայ եւ Թուրք ըմբշներ՝ Արամ Մարգարեան եւ Հարուն Տողան: Թուրք մարզիկը յաղթանակ մը արձանագրելով տիրացած էր ոսկի մետալին եւ Հոչակուած՝ աշխարհի ախոյեան:

Սակայն, կասկածներ կային, որ Տողան խթանիչ դեղեր կ'ընէր զործածած ըլլալ: Այդպէս ալ դուրս եկաւ. Թուրք մարզիկին երկրորդ քննութիւնները աստիկ հաստատեցին եւ Հարուն Տողան ստիպուեցաւ վերադարձնել ոսկի մետալը:

Ըմբշամարտի միջազգային ֆեդերասիոնը հեռաձայնով կ'ապի մէջ մտաւ Հայաստանի Ազգային Ողիմպիականի Կոմիտէի նախագահ Իշխան Զաքարեանի հետ եւ հաղորդեց, որ հայրենի ըմբիչ Արամ Մարգարեան կը հռչակուի աշխարհի ախոյեան: Հոկտեմբերի աւարտին, ոսկի մետալը պիտի բերուի Հայաստան եւ յանձնուի՝ իրաւատիրոջ:

ՖՈՒՄԻԼԻՍ 1 ՊԱՀՐԵՅՆԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ՝ 2004ԷՆ ՍԿՍԵԱԼ

Յորմիւլա 1ի աշխարհի ախոյեանութիւնը կը բաղկանայ ընդհանրապէս 17 կրան փրիներէ, իսկ երբեմն՝ 16: Տարբեր առիթներով, մասնակցող խումբեր յայտնած են, թէ կը փափաքին, որ այդ կրան փրիներու թիւը պակսի, քան թէ աւելայ:

Այժմ, գլխաւոր հարցումը կը մնայ, թէ յայտագիրէն ո՞ր կրան փրին դուրս պիտի մնայ, նկատի ունենալով, որ 2004էն սկսեալ Յորմիւլա 1ի աշխարհի ախոյեանութեան կրան փրի մը՝ Պահրէյնի մէջ. յուրը կը հաստատէ Յորմիւլա 1ի նախագահ Մաքս Մոսլի, աւելցնելով, որ անկար պիտի ըլլայ ամէնէն հետաքրքրականը՝ երկար ժամանակի մը համար, որովհետեւ տեղի պիտի ունենայ անապատին մէջ:

Պահրէյնի իշխան շէյխ Սալման Պըն Համատ Խալիֆա արդէն իսկ անցեալ Սեպտեմբերին յայտարարած էր, թէ երկար պայմանագրութիւն մը ստորագրած է Յորմիւլա 1ի նախագահ Մոսլիի հետ, որ եղած էր Պահրէյնի կրան փրիին պաշտօնական հիմնարկէքի արարողութեան աւարտին՝ հիմնաքարը դնողը:

Մոսլի աւելցուց, որ ապագային Միջին Արեւելքի մէջ ալ կրան փրիի հարց գոյութիւն չունի: Սակայն, ան ակնարկելով Լիբանանի, ըսաւ, թէ շատ հաւանաբար ուրիշ աշխարհի ախոյեանութեան մրցումներէն մէկը տեղի ունենայ Լիբանանի մէջ:

Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱԾԻՂ

ՊԱՍԵԹՊՈԼԻ ՓՈՐՉԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

2002-2003 տարեշրջանի պատեթպոլի բոլոր խումբերը իրենց փորձերուն կը սկսին այսօր՝ Ուրբաթ, 11 Հոկտեմբեր 2002էն սկսեալ, հետեւեալ ժամանակացոյցով՝

- ԱՂԶԻԿԵՐ Ժամ
- Ա. ՂԱՍԱԿԱՐԳ. Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ կէսօրէ ետք 6:00էն 7:30
- ՏԱՐԻՉԱՅԻՆ 1983-1984 ծնունդ. - Ուրբաթ կէսօրէ ետք 4:30էն 6:00
- 1985-1986 ծնունդ. - Շաբաթ կէսօրէ ետք 1:00էն 2:30
- 1987-1988 ծնունդ. - Ուրբաթ կէսօրէ ետք 7:30էն 9:00
- 1989-1990 ծնունդ. - Շաբաթ կէսօրէ ետք 4:00էն 5:30
- 1991-1992 ծնունդ (միմի պատեթ). - Ուրբաթ կէսօրէ ետք 3:00էն 4:30
- 1993-1994 ծնունդ (միմի պատեթ). - Ուրբաթ կէսօրէ ետք 3:00էն 4:30
- 1995-1997 ծնունդ (փոքրեր). - Շաբաթ կէսօրէ ետք 2:30էն 4:00
- ԱՉԱՍ 1989-1990 ծնունդ. - Շաբաթ կ. առաջ 8:30էն 10:00
- ՏՂԱԲ 4Դ7 ՂԱՍԱԿԱՐԳ. Չորեքշաբթի եւ Ուրբաթ կէսօրէ ետք 9:00էն 10:30
- ՏԱՐԻՉԱՅԻՆ 1983-1984 ծնունդ. - Երեքշաբթի կ. ետք 4:30էն 6:00
- 1985-1986 ծնունդ. - Չորեքշաբթի կ. ետք 4:30էն 6:00
- 1987-1988 ծնունդ. - Երկուշաբթի կ. ետք 4:30էն 6:00
- 1989-1990 ծնունդ. - Շաբաթ կէսօրէ ետք 5:30էն 7:00
- 1991-1992 ծնունդ (միմի պատեթ). - Շաբաթ կէսօրէ առաջ 11:30էն 1:00
- 1993-1994 ծնունդ (միմի պատեթ). - Շաբաթ կէսօրէ առաջ 10:00էն 11:30
- 1995-1997 ծնունդ (փոքրեր). - Շաբաթ կէսօրէ ետք 2:30էն 4:00

Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՊԱՍԵԹՊՈԼԻ ԶԱՆՉԱՆՈՒՄԸ

ՄԱՐՁԻՆ ԻՆՏԵՐՆԵՏ

ԻՆՏԵՐՆԵՏ

ԻՆՏԵՐՆԵՏ

ԻՆՏԵՐՆԵՏ

